

1. Մրցաշարի նպատակները և խնդիրները.

- մրցաշարի ուժեղագույն մարզիկների որոշումը;
- Հայաստանի Հանրապետությունում Պարա ծանրամարտի զարգացումը, ճանաչելիության բարձրացումը;
- մարզաձևի հեղինակության բարձրացումը;
- տաղանդավոր մարզիկների բացահայտումը;
- պարալիմպիկ մարզաձևի մասսայականացումը;
- հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացումը և հաշմանդամային սպորտի զարգացումը;
- Պարա ծանրամարտի միջոցով մրցակցության ու փոխըմբռնման ոգու ապահովումը;
- արդար խաղի ապահովումը:

2. Առաջնության կազմակերպումը

Պարա ծանրամարտի ՀՀ 2025թ առաջնության կազմակերպիչը Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեն է (այսուհետ՝ ՀԱՊԿ): Առաջնության կազմակերպումն իրականացվում է ՀԱՊԿ Պարա ծանրամարտ մարզաձևի հանձնաժողովը և առաջնության Կազմկոմիտեն: Մրցաշարի կազմակերպիչը և իրականացնողները պատասխանատու են մրցաշարի պատշաճ անցկացման համար:

3. Հաշվետվություններ

Առաջնության մարզական արդյունքների մասին արձանագրությունները Կազմկոմիտեի կողմից պետք է ներկայացվեն ՀԱՊԿ՝ մրցաշարի ավարտից անմիջապես հետո, իսկ հաշվետվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Մասնակիցներ և հայտերը

Պարա ծանրամարտի ՀՀ առաջնությանը կարող են մասնակցել Պարա ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնների համաձայն մասնակցության իրավունքի չափանիշներին բավարարող 12 տարին մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը լրացող ֆիզիկական հաշմանդամություն ունեցող բոլոր ՀՀ քաղաքացիները և Արցախից բռնի տեղահանված և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձիք:

Առաջնությանը չեն կարող մասնակցել ՀՀ օրենսդրության, Միջազգային պարալիմպիկ կոմիտեի կանոնակարգերի կամ ՀԱՊԿ կանոնադրության համաձայն որակագրված այն մարզիկները, որոնց որակագրվման ժամկետը ուժի մեջ է առ առաջնության մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Առաջնությանը մասնակցելու համար ակումբները, մարզական հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ մարզիկները մինչև **2025 թվականի մարտի 18-ը, ժամը 23:00**, սահմանված ձևով լրացված մասնակցության հայտը պետք է ուղարկեն ՀԱՊԿ պաշտոնական arm.paralympic@gmail.com էլեկտրոնային փոստին կամ հանձնել ՀԱՊԿ գրասենյակ (ք.Երևան, Ծիծեռնակաբերդի 16 հասցե):

5. Առաջնության անցկացման կանոններ

Պարա ծանրամարտի 2025թ. ՀՀ առաջնությունը անց է կացվելու Պարա ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի (WPPO-ի) գործող կանոնների շրջանակում:

Դասակարգում չունեցող մարզիկները, մինչև առաջնությունը պետք է անցնեն ներքին մարզական դասակարգում:

Յուրաքանչյուր մարզիկ կունենա երեք մոտեցման իրավունք և ամեն մոտեցման ընթացքում ծանրաձողի բարձրացման մեկ փորձի հնարավորություն:

Արդյունքների հաշվարկը

<u>Սեռը և տարիքային խումբը</u>	(Best lift) <u>Լավագույն բարձրացրած բաշ</u>	(Total lift) <u>Բարձրացրած բաշերի հանրագումար</u>	Coefficient Formula (pDOTS) Անհատական մրցապայքարների pDOTS գործակցի բաևածև
<u>Կանայք</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Մեծահասակներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Երիտասարդներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Պատանիներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Վեներասներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Տղամարդիկ</u>			Դիպլոմ
<u>Մեծահասակներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Երիտասարդներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Պատանիներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ
<u>Վեներասներ</u>	Դիպլոմ	Դիպլոմ	Դիպլոմ

Առաջնության անցկացման ժամկետները

Առաջնությունը անց է կացվելու 2025 թվականի մարտի 26-ից 27-ը: Առաջնության մեկնարկի ժամ է սահմանվել 12:00-ը:

6. Առաջնության անցկացման վայրը

Առաջնությունը կանցկացվի Երևանի Ծիծեռնակաբերդի 16 հասցեում գտնվող «Փյունիկ» մարզադահլիճում:

7. Կացություն և սնունդ

Սահմանափակ թվով մասնակիցներ անվճար կապահովվեն սննդով և գիշերակացով (ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և չափով):

8. Տրանսպորտ

Սահմանափակ թվով մասնակիցների համար անվճար կապահովվի տրանսպորտային ծառայություն:

9. Մասնակցության վճարներ

Առաջնության մասնակցության համար սահմանված մասնակիցների քանակից ավել մասնակցի հայտ լինելու դեպքում, յուրաքանչյուր ավել անձի համար մասնակցության վճարի չափն է 13000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀԱՊԿ հաշվարկային հաշվին: Մասնակցության վճարն իր մեջ ներառում է սնունդ մեկ օրվա և գիշերակաց:

10. Մրցանակներ և պարգևատրումներ

Առաջնության ընթացքում կիսադարկվի մեդալների 2 հավաքածու՝

- Կանայք (Անհատական մրցապայքար **pDOTS գործակցի բանաձևի հաշվարկով**)
- Տղամարդիկ (Անհատական մրցապայքար **pDOTS գործակցի բանաձևի հաշվարկով**)

Խսադարկված մեդալները նվաճած մարզիկները կստանան դրամական պարգևներ՝ ՀՀ կառավարության սահմանած չափերով:

11. Ֆինանսավորումը

ՀՀ առաջնության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ Պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀԱՊԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի միջոցներով: